ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՊ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

«29» հունիսի 2021թ.

Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ տիկին Քրիստիննե Գրիգորյան

Համակարգող խորհրդի նիստի մասնակիցներ/անդամներ՝

Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ռոբերտ Ստեփանյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ
Արսեն Այվազյան	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արա Ֆիդանյան	ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Էմմա Ավագյան	ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման բաժնի պետ
Միեր Մկրտչյան	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ
Սյուզաննա Սողոմոնյան	ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գլխավոր մասնագետ
Թագուհի Հարությունյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության

	վարչության պետ
Աննա Կարապետյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Իզաբելլա Սարգսյան	Եվրասիա համագործակցության հիմնադրամ
Աննա Հովհաննիսյան	Կանանց ռեսուրսային կենտրոն
Տաթևիկ Խաչատրյան	Բաց հասարակության հիմնադրամներ
Մարիամ Անտոնյան	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Էդգար Խաչատրյան	Խաղաղության երկխոսություն

Համակարգող խորհրդի նիստը մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարի առաջին, Համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի բացման խոսքով: Իր խոսքում նախարարի առաջին տեղակալն անդրադարձել է ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 24-ի N 1030-Լ որոշմամբ հաստատված ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. ԳԾ-ի փոփոխություններին: Ներկայացնելով հիմնական փոփոխությունները՝ տիկին Գրիգորյանը նշել է, որ գործընթացն իրականացվել է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, հաշվի են առնվել պետական մարմինների, ինչպես նաև Խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների առաջարկությունները: Արդյունքում փոփոխություններ են կատարվել մի շարք միջոցառումների կատարման ժամկետներում, ինչպես նաև, ի թիվս այլնի,ԳԾ-ում ներառվել են նոր միջոցառումներ՝ ուղղված Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհայտ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացմանը, որի շրջանակներում նախատեսվում է հավաքագրել և ամբողջականացնել նշված անձանց հասանելի սոցիալական,

հոգեբանական, բժշկական, իրավական աջակցության ծառայությունների կարիքները և թիրախային աջակցություն ցուցաբերել:

Տիկին Գրիգորյանը նշել է նաև, որ հիմք ընդունելով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող խորհրդի անհատական կազմը, գործունեության կարգը և հաշվետվությունների ներկայացման ձևաչափը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի մարտի 2-ի N 282-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2021թ. մայիսի 31-ի թիվ 582-Ա որոշմամբ լրացում է կատարվել ՄԻՊ ԳԾ-ի միջոցառումների հաշվետվությունների ներկայացման ձևաչափում: Վերջինս ընդգծել է նաև, որ լրացման համաձայն՝ 2021թ. առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ հաշվետվություններում անհրաժեշտ է ներառել նաև տեղեկատվություն կատարված գործողության շրջանակներում անցկացված հանրային քննարկման և դրան մասնակից դարձած թիրախային լսարանի վերաբերյալ:

Այնուհետ՝ ՀՀ արդարադատության և աշխատանքի ու սոցիալական հարցերի, նախարարությունների ներկայացուցիչները ներկայացրել են 2020թ. երկրորդ կիսամյակի ընթացքում չիրականացված կամ մասամբ իրականացված միջոցառումների իրագործման վերաբերյալ հաշվետվությունները՝ վերահաստատելով Կառավարության պատրաստակամությունը դրանք հնարավորինս սեղմ ժամկետում ավարտին հասցնելու վերաբերյալ:

2021թ. առաջին կիսամյակում իրականացման ենթակա միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունները համապատասխանաբար ներկայացրին ՀՀ պաշտպանության, արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության և սպորտի նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները:

Օրակարգի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացմանը հաջորդել է Խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խոսքը:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի ներկայացուցիչ Էդգար Խաչատրյանը խնդրել է ՊՆ ներկայացուցչին ներկայացնել տեղեկատվություն ԳԾ-ի 48-րդ կետի ակնկալվող ազդեցության՝ զինված ուժերում կանանց թվի ավելացման մասով, ինչպես նաև ներկայացրել հասարակական կազմակերպության կողմից անցկացված հետազոտության արդյունքները՝ ԳԾ-ի 18-րդ կետով նախատեսված խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների ստեղծման վերաբերյալ: Հետազոտության արդյունքներով պարոն Խաչատրյանն առաջարկել է առավել գործուն, այլընտրանքային մեխանիզմներ ներդնել:

Իր խոսքում պարոն Խաչատրյանը մտահոգություն է հայտնել նաև գերությունից վերադարձած զինվորների զինվորական ծառայություն վերադառնալու հարցի շուրջ՝ խնդրելով ներկայացնել համապատասխան իրավական հիմքերի ու զինվորների պատշաճ բժշկական, ներառյալ հոգեբանական, հետազոտությունների և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Անդրադառնալով պարոն Խաչատրյանի բարձրացված հարցերին՝ ՊՆ ներկայացուցիչ Սյուզաննա Սողոմոնյանը ներկայացրել է ԳԾ-ի 48-րդ և 18-րդ կետերի շրջանակներում ՊՆ-ի կողմից իրականացված միջոցառումները՝ մատնանշելով նաև խոշտանգումների դեպքերի վերաբերյալ ՊՆ-ի թեժ գծին դիմելիության աճը: Տիկին Սողոմոնյանը ներկայացրել է նաև, որ գերությունից վերադարձած զինվորների զինվորական ծառայություն վերադառնալու հարցը կազմակերպվում է գործող օրենսդրությամբ, որը վերանայման կարիք ունի, իսկ ինչ վերաբերում է առողջական վիճակին, ապա վերջիններս անցնում են պատշաճ բժշկական զննություն և միայն դրական եզրակացության դեպքում են վերադառնում ծառայության:

Տիկին Գրիգորյանը ևս իր մտահոգությունն է հայտնել հարցի շուրջ և խնդրել ՊՆ-ին հետևողական լինել հարցի արագ պարզաբանմանը, նման դեպքերի քանակի ու

կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Խորհրդի անդամներին, ինչպես նաև հայտնել է Արդարադատության նախարարության պատրաստակամությունը, անհրաժեշտության դեպքում աջակցելու օրենսդրական փոփոխությունների գործընթացին:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչ Մարիամ Անտոնյանն իր խոսքում կարևորել է ԳԾ-ի իրագործման ընթացքում իրականացված ուսումնասիրությունների հանրայնացումը, որին ի պատասխան Արդարադատության նախարարության ներկայացուցիչը նշել է, որ միջոցառումների վերաբերյալ արված ուսումնասիրությունները, առկայության դեպքում, տեղադրվում են e-rights.am հարթակի յուրաքանչյուր գործողության համար նախատեսված հաշվետվություններ ենթաբաժնում և հասանելի են բոլորին:

Բաց հասարակության հիմնադրամների ներկայացուցիչ Տաթևիկ Խաչատրյանը, անդրադառնալով Արդարադատության նախարարության կողմից 33-րդ միջոցառման շրջանակներում իրականացված իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանության երաշխիքների ամրապնդմանն առնչվող օրենսդրության կատարելագործմանն ուղղված ուսումնասիրությանը նշել է, որ այն բավական համընդգրկուն է և առաջարկել, ի լրումն նախորդ քննարկումների, ուսումնասիրությամբ ներկայացվող առաջարկներն առավել առարկայական քննարկել սույն ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպությունների հետ: Առաջարկությանն ի պատասխան՝ Արդարադատության նախարարի առաջին տեղակալը, հնարավորինս սեղմ ժամկետում սույն հանդիպումը Արդարադատության նախարարության կողմից կազմակերպելու պատրաստակամություն է հայտնել:

Ամփոփելով Համակարգող խորհրդի նիստը՝ տիկին Գրիգորյանը ևս մեկ անգամ հիշեցրել է պետական մարմինների ներկայացուցիչներին միջոցառումների հաշվետվությունները սահմանված ժամկետներում (այն է՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում) ՀՀ վարչապետի աշխատակազմ, Արդարադատության նախարարություն ներկայացնելու և e-rights.am հարթակում տեղադրելու՝ Կառավարության որոշմամբ սահմանված պահանջի մասին և

շնորհակալություն հայտնել Խորհրդի անդամներին արդյունավետ ու կառուցողական համագործակցության համար:

Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝
Քրիստիննե Գրիգորյան
12.07.2021թ.